

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ԴՈՒՍՏՐՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ
ՄԵԾԱՁՆԻՒ ՕՐԻՈՐԴ ԱՆՈՅՇ ՄԱԹԷՈՍԵԱՆ
ՈՐ Ի ՆԻՒ ԵՕՐՔ, ԱՄՆ

Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք յղում Ձեզ՝ մեր ժողովրդի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանաւոր, մեծազնիւ դպրերդ, եւ գոհութիւն ու փառք մատուցում Բարձրեալն Ասպծուն, որ հայուհուդ հոգում զօրեղ են առ Հայրենին ու Հայոց Եկեղեցին սէրն ու նուիրումը, որով գովելի Ձեր ծառայութիւնն էք բերում հայութեան հոգեւոր եւ ազգային կեանքի պայծառութեանն ու բարգաւաճմանը Հայրենիքում եւ ի սփիւռս աշխարհի:

Ճշմարտապէս, գովարժան են Ձեր գործերը եւ յանձնառութիւնները ազգային եւ եկեղեցական կեանքում: Դուք ազնիւ ոգով ու ինքնաբուխ ընծայաբերումներով աջակցութիւն էք բերում Արեւելեան փիրախնամ թեմի գործունէութեանը, Վաշինգտոնի Հայոց Յեղասպանութեան թանգարանի կառուցմանը, Երեւանի պետական համալսարանին, սատարում Սիւնեաց թեմի «Սիրանոյշ» ճամբարի գործունէութեանը: Իսկ շուրջ մէկ տասնամեակ Ձեր կողմից հասպատուած հիմնադրամը կայուն միջոցներ է ապահովում հայրենաբնակ կարիքաւոր բազմաթիւ երիտասարդների կրթութիւնը բարձրագոյն ուսումնական հաստատութիւններում կազմակերպելու համար՝ արժանացնելով Ձեզ երախտագէտ հայորդեաց խոնարհումին ու յարգանքին:

Մեծազնիւ օր. Մաթէոսեան, Քրիստոսասէր մեր ժողովրդին մատուցած Ձեր հաւատաւոր, ազգանուէր ու հայրենասէր հոգուց ծնուած գործերի բարձր

գնահատանքով սիրով ընդառաջում ենք ԱՄՆ հայոց Արեւելեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեանի ազնիւ խնդրանքին եւ Հայրապետական այսու կոնդակով շնորհում Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՄՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Աղօթում ենք, որ Ամենակալ Տէրը շնորհի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին քաջառողջ ու արեւշող կեանքի բազում օրեր եւ մշտանորոգ յաջողութիւններով պսակի Ձեր ձեռնարկումները՝ ի պայծառութիւն մեր Եկեղեցու եւ ի բարօրութիւն Քրիստոսասէր մեր ժողովրդի:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ եւ ընդ ամենեսեան. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 11-ն Դեկտեմբերի
յամի Տեառն 2009 եւ ի թուին հայոց ՌՆԾԸ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 539